

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1935-1936 ԹՎԱԿԱՆՆԵՐ)**

Դավիթ Գասպարյան

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/գ

Էլ. հասցե՝ grakanagetgasparyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 03.09.2021, գրախոսվել է 16.03.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-90

Ներածություն

1935 թ. մարտի 13-ին Ալազանի ստորագրությամբ Չարենցին գրություն է ուղարկվում, ըստ որի՝ նույն օրը՝ երեկոյան ժամը 7-ին, ՀԽԳՄ վարչությունը քննարկելու է նրա «Հայտարարությունը», և որ նրա ներկայությունն անհրաժեշտ է: Չարենցը մերժել է և չի մասնակցել¹:

«Հայտարարությունն» ընթերցում է Տեր-Սիմոնյանը, այն բնորոշում որպես «քաղաքական փաստաթուղթ», որը, իբր, արտահայտում է «դասակարգային թշնամու գաղափարախոսությունը»: Նույնը միաբերան կրկնում են ելույթ ունեցողները: Նախորդ որոշման ձևակերպումների վերաշարադրանքով կամ կրկնությամբ միաձայն կայացվում է համանման որոշում. «Վարչությունը խստիվ դատապարտում է Չարենցի, ըստ էության հակախորհրդային, հակահասարակական վերջին հայտարարությունը և գտնում է անհրաժեշտ նրան հեռացնել Հայաստանի խորհրդային գրողների միության վարչությունից և միությունից»²:

Մարտի 16-ին որոշումն ուղարկվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմ և Լուսժողկոմատ:

Միջանկյալ հիշենք, որ համանման հայտարարություններ Չարենցն արել էր նաև ավելի վաղ. 1932 թ. փետրվար 17-ին. «Ինչ վերաբերում է ինձ՝ հայտնում եմ, որ իմ ստեղծագործական պարապմունքներին խանգարում էր ոչ թե Պետհրատի աշխատանքը, այլ այն, որ այդ պաշտոնավարության ռոճիկն ինձ չի ապահովել նյութապես, և ես հարկադրված եմ եղել, բացի պաշտոնավարությունից, բոլոր ազատ ժամանակս տրամադրել խմբագրական, թարգմանական և այլ աշխատանքների, որպեսզի հնարավորություն ունենամ ապրելու»³: Այդպիսի մի «հայտարարություն» նա արել էր 1934 թ. մայիսի 6-ին՝ ոչ միայն իրեն դուրս դնելով գրողների միությունից, այլև վերադարձնելով

¹ Չարենց 1983, 528:

² Չարենց 1917, 299-301:

³ Չարենց 1968, 461-463:

անգամ հացի ու մթերային քարտերը. «Ելնելով այս հանգամանքից, խնդրում եմ *մինչև իմ գրքի մասին դրական լուծում ստանալը* համարել ինձ Խ.Գ. միությանից դուրս»⁴: Այսինքն՝ այս հրաժարականները օրավուր հասունացող մեծ դժգոհությունն ու խորացած վիրավորանքը հայտնելու ձև էին:

Չարենցի «Հայտարարությունը» խոր վրդովմունքի և հիասթափության արտահայտություն էր, հոգեբանական տեղատվության ու մակընթացության մի խորտակիչ ալիք՝ ընդդեմ գարշելի իրականության ու խափանիչ միջավայրի, ընդդեմ գրական ու քաղաքական իշխանությունների: «Չարականներն ուրախ էին, որ ինքը՝ Չարենցն է առիթ տալիս իր վրա հարձակվելու, իսկ բարեկամները վիրավորական գտան նրա քայլը և, միացած առաջիններին, որոշեցին գրողների միությունից վտարել... Ժամանակի հայ մեծագույն բանաստեղծին: Այս լուրը Չարենցին հանեց հավասարակշռությունից: Ամեն ինչ սպասում էր, բայց ոչ այդ: Մեկ-մեկ թվում էր իր բարեկամների անունները և ասում՝ մի՞թե սա էլ, մի՞թե այս մյուսն էլ... Մի պահ գրգռվում էր, հայիոյում, բայց հետո, երբ փոքր-ինչ խաղաղվում էր, չէր հավատում, թե այդ բոլորն իրականություն է, մտածում էր, թե այստեղ անշուշտ մի թյուրիմացություն կա, շուտով ամեն բան կպարզվի»⁵:

Ինքնադիմանկար

Հոգեկան այս մեծ ալեկոծությունն ու բարեկամների փորձությունն ունեցան նաև իրենց բանաստեղծական գայրալից անդրադարձները՝ «Ներքող երգողներին (Ինձ՝ Խ.Գ. Մ-ից վտարելու առթիվ)», «Մեր նոր ճորտերին», «...Պետությունն՝ ամբողջ իր ապարատով»: Նշված երեք գործերն էլ գրված են նույն օրը՝ 1935 թ. ապրիլի 14-ին.

Պետությունն՝ ամբողջ իր ապարատով
Ելել է ահա... մի պոետի դեմ,-
Էլ ինչպես ես ինձ ահով չդիտեմ
Ու չհիանամ իմ «բիրտ» սֆաթով,-
Եվ... զարհուրելի իմ ուժով հպարտ,-
Զբացականչեմ՝ «-Հերո՛ւ եմ ու մարդ!!!»⁶:

...Պատում է հոգիս տրտմություն մի հոծ,
Որ փրփրաբերան կիզել եք ուզում
Ճակատին դուք իմ՝ դափնու արժանի՝
Դրոշմ մատնիչի ու դավաճանի...⁷:

⁴ Չարենց 1996, 228:

⁵ Չարյան 1975, 102:

⁶ Չարենց 1996, 89:

⁷ Չարենց 1983, 92-94:

Իրականության պատմական բովանդակությունը՝ քաղաքական բռնությունը, Չարենցը պատկերում է ինչպես առարկայական վերորերյալ պատկերներով, այնպես էլ՝ զառանցական տեսիլներով («Ձառանցանք»).

Ատամնաթափ մի մարդ, գանգը նման կապկի,

Նստել էր կոկորդիս և ինձ խեղդում էր...

Թույն էր թորում նա իմ գիշերային շապկին-

Եվ անունը նրա... «Քնքշություն» էր...⁸:

Պետք է հաջորդեին ցնորական տեսիլներ, անգամ՝ «Ձառանցանք զառանցանքում»...

Չարենցի պոեզիայում աստիճանաբար ուժգնանում են ոչ միայն զառանցական, այլև հոգևոր տեսիլները: Նա մեկ թափանցում է աստվածաշնչյան մոտիվների մեջ՝ «Բանք Ժողովողի», ոգեկոչում գաղափարներ ու կերպարներ, հավատաքննիչների վերադարձող միջնադարին ավելանում է նախնադարը՝ մարդ-կապիկը («Էկլեզիաստես»), մեկ խորանում հայ միջնադարի մեջ՝ Նարեկացի, և որպես Աստծու՝ դիմում նրան («Ինչպես հնում վկան այն՝ Նարեկացին»), մեկ ուրվագծում տառապանքի խաչը շալակած և Քրիստոսի պես Գողգոթա բարձրացող տանջահար կերպարներ՝ Գրիգոր Ծերենց («Երբ բարձրանում է նա վեր» - «Մի ծեր վանական»), մեկ տրվում աղոթքների («Իմ լերան աղոթքը», «22.X.1936», «Վերջին աղոթք»): Խորանում, թանձրանում են կերպարները, ժամանակի շունչը դառնում է տագնապ, գույժ, խորքում՝ թաքնված վախ՝ ընկերներ, հակառակորդներ, գրական-քաղաքական միջավայր՝ «Պոետի վիշտը», «Տխուր կարուսել», ամբողջ 1935-1937 թթ. ստեղծագործությունը:

Ժամանակի ու միջավայրի մեջ առանձնանում է պատմության վավերագիր դարձած իր կերպարը՝ որպես ազատ տարերքի հանճար, մարտնչող մարտիկ, հոգևոր պետ, ժամանակի հերոս, զոհ և նահատակ՝ «Այնքան մաղձ կա իմ սրտում, այնքա՛ն դառնություն», «Իմ օրերում ես ցանկացա լինել վսեմ և ինքնուրույն», «Արշավում է և՛ քո, և՛ աշխարհի վրա», «Ներքող երգողների», «Էկլեզիաստես», «Տխուր կարուսել», «Եղել եմ, այո՛, ես հոգևոր պետ»...

Ահա ինքնաճանաչման ու ինքնամարմնավորման փորձերը («Ինձ», «Իմ լուսաստղը»).

ԻՆՁ

Քո անունի, Չարե՛նց,

Ասոնանսն է՝ «Արև»-

Եվ բառն - «հանճարե՛ղ»⁹:

«Բայց ցնծում էր Պառնասն առանց քե՛զ», - 1936-ի հուլիս-օգոստոսին Ծաղկաձորում գուժում է բանաստեղծը («Իմ լուսաստղը») և ավելացնում.

Կրկին կանգնած եմ ես ինքըս իմ դեմ շրվար՝

Անօգնական, մենակ, - ինչպես կաղնի հանդում,

Ուր ոչ մի ծառ չկա, - ուր տագնապով անդուլ

⁸ Չարենց 1983, 95:

⁹ Չարենց 1983, 105:

Քամիներն են միայն շաշում դժնի ու հար:

Ուր՝ գորշ հողին կպած՝ լոկ մի քանի մացառ,
Որպես մարդիկ, որ մի գաղտնիք են իմանում՝
Փսփսում են իրար ինչ-որ անհայտ անուն,
Երազելով մի հարթ մի *անկաղնի* բացատ¹⁰:

Առանձին բանաստեղծություններում բացահայտում է կյանքի բարդ առեղծվածը՝ ոչ միայն այն, ինչ գիտակցական է, ոչ միայն այն, ինչ ենթագիտակցական է, այլև անգիտակցականը՝ որպես ազդակ, որպես պահի մեջ մտքի կայծակ: Սրանով ժխտում է ամեն մի դաս ու դասագիրք և հայտարարում. «Օ՛, մեզ կյանքն է դառնում դասատու -Ե՛վ գիտուն, և՛ կույր, և՛ շվայտ...» (ԱԶԵ, էջ 110), - այսինքն՝ կյանքի բազմազեղուն հարստությունը և ոչ թե օրենքն ու օրենսգիրքը, որով առաջնորդվում էին Homo Sovietikus-ները, այսինքն՝ հակառակորդները, որոնք միաբերան կրկնում էին՝ իրականությունից կտրված է. ո՛չ իրականությունից էր կտրված, ո՛չ կյանքից, ո՛չ առօրյայից, ո՛չ միջավայրից, ո՛չ էլ պատմությունից... Հավերժության ու անմահների հետ էր...

Անպակաս է կանացի շունչը: Իրական կանանց կողքին թանգարաններում մրսող մարմարիոնյա կանայք են, ոսկի ու ցուլք հագած մայրամուտի կանայք, հեծյալ ամազոնուհիներն ու արդեն իսկ առասպելյալ անունները՝ Նուարդ, Սաֆո, Նավզիկե... Մի ամբողջ շարք են կազմում Արուս Ոսկանյանին նվիրված պոեմներն ու բանաստեղծությունները¹¹:

1935 թ. մարտի 22-ին Անդրֆեդերացիայի ՆԳԺԿ վարչության պահանջով ՀԽՍՀ պետանվտանգության վարչության կողմից Չարենցը ենթարկվում է լրացուցիչ հարցաքննության: Հարցնում են՝ ինչո՞վ է պայմանավորված ՀԳՄ-ից դուրս գալու «Հայտարարությունը»:

Չարենցն ամեն ինչ պատճառաբանում է «կենսապահովման իր նվազագույն կուլտուրական չափի» պահանջով. «Փոքր ժողովուրդների գրողներն, ըստ իս, պետք է ունենան զուգահեռ մասնագիտություն»: Նորից արծարծվում է «Գիրք ճանապարհի»-ի տպագրության հարցը: Պատասխանում է. «Իմանջանը և Տեր-Գաբրիելյանը կողմ էին գրքի լույս ընծայմանը <...>: Բայց ընկ. Արիսյանը [հայտնեց, որ] ինքը չի կարող բաց թողնել այդ գիրքը»: Իսկ Արիսյանին ահաբեկելու մտադրությունը համարել է «լկտի պրովոկացիա» և «Հոգեբանական ուժասպառության հետևանք»¹²:

1935 թ., ապրիլ 14-ին գրում է «Կոչված եմ այսօր ահա ես Չեկա...» տողով սկսվող բանաստեղծությունը և կողքին ավելացնում. «Ուրեմն այսպե՛ս... Իբրև «տեղորիստ»»:

Կոչված եմ այսօր ահա ես Չեկա...

¹⁰ Չարենց 1983, 146:

¹¹ «Արուսին», «Ձոն», «Գովք Արուսին», «Գովք Հայկազյան Մելպոմենեի ամենափայլուն աստղին՝ Արուսին», «Դանթեական սեր», «Արուսին – մենակ», «Արուսին (ինտիմ)»: Տե՛ս Չարենց 2017, 66-83:

¹² Չարենց 1996, 347-354:

Կարծես թե ուրիշ հերյուրանք չըկա,
 Որով «օրենքից դուրս» համարեն ինձ...
 Մատնում է մի «հին բարեկամ» Մակինց,
 «Գրողները» ինձ «դուրս են շարտում
 Դրաստամատյան Գրական Տնից»,
 Իսկ վերից Խանջյանն ի՛նքն է հոխորտում,
 Թե ինձ «կհանի իմ հիմար քնից...»:

.....
 Էհ, վաղուց եմ ես «քնից» արթնացել,-
 Այդ դո՛ւք եք, ավա՛ղ, քնած մնացել...¹³:

Հարցաքննությունների արձանագրություններին կցված է «Զրույց Չարենցի հետ» գրառումների թերթիկ: Լրտեսի կողմից այստեղ գրանցված են Չարենցի կարծիքները: Դժգոհում է ընդհանուր վիճակից. «Կուլտուրայի հարցում մեր ղեկավարությունը ձախյիկ է: <...>: Ես միայնակ եմ, մտերիմ մարդիկ չունեմ: <...>: Ուկրաինայում տողի համար վճարում են 7 ռուբլի, իսկ մեզ մոտ՝ 1 ռուբլի: Մեզ մոտ ինչքան ուզում ես գրի, մեկ է՝ սովից կմեռնես: Վրաց բանաստեղծները հրաշալի են ապրում, այնտեղ նրանց հովանավորում է կառավարությունը: <...>: Երբ գրում եմ ընդհանուր հարցերի մասին, ես ներշնչվում եմ, իսկ երբ գրում եմ Հայաստանի մասին՝ ինձ հոռետեսությունն է պաշարում: Պետք է թքել և հեռանալ: <...>: Ոչ մեկի հետ ես չեմ հաղորդակցվում: Ես ոչ ոք չունեմ, *ես միայնակ մարդ եմ*»¹⁴:

Մոսկվայի խորհրդային գրողների տանը 1935 թ. մայիս 10-ին տեղի է ունենում հայ գրականությանը նվիրված երեկո: Չարենցը հրավիրված չէր: Տեր-Սիմոնյանը մեծարում է Վշտունուն և նսեմացնում Չարենցին («Պրավդա», 1935, 11 մայիս):

Զգալով, որ անգոր է հասանելի դարձնելու իր ճշմարտությունը՝ 1935 թ. մայիսի 11-ին գրավոր դիմում է Անդրերկրկոմի առաջին քարտուղար Բերիային¹⁵: Նույն օրը Անդրերկրկոմի միջնորդությամբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում է Չարենցին վերականգնել ՀԽԳՄ շարքերում¹⁶: ՀԽԳՄ վարչության նիստն իր հերթին 1935 թ. հունիսի 6-ին Չարենցին վերականգնում է Հայաստանի խորհրդային գրողների միության կազմում:

Հայ գրողների պատվիրակության անդամները 1935 թ. մայիսի 12-14-ին Մոսկվայում հանդիպում են ռուս գրողների հետ: ԽՍՀՄ ԳՄ-ն Մոսկվայում կազմակերպում է հայ պոեզիայի երեկո: Բացման խոսք է ասում Վ. Կիրպոտինը, զեկուցում է Տեր-Սիմոնյանը. «Եղիշե Չարենցը իր ստեղծագործության առաջին իսկ օրերից և, դժբախտաբար, մինչև ամենավերջին օրերը, գտնվում է հին հայկական նացիոնալիստական գրականության ազդեցության տակ: Եթե Եղիշե Չարենցը լրջորեն չմտածի, թե ուր է տանում նրան իր ստեղծա-

¹³ Չարենց 1996, 88:

¹⁴ Չարենց 1996, 354-359:

¹⁵ Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, 163:

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 10, թ. 92:

գործական գիծը և ինչպիսի տենդենց ունեն նրա ստեղծագործությունները, եթե նա առաջվա նման չլսի, թե ինչ է ասում նրան խորհրդային քննադատությունը, ապա նա կարող է դառնալ դասակարգային թշնամու գաղափարական դիրքերի արտահայտիչը»¹⁷: Հակառակ այսպիսի հալածանքների՝ արտիստ Վ. Կաչալովն արտասանում է «Խմբապետ Շավարշը» Պ. Անտոկոլսկու թարգմանությամբ:

1935 թ. հունիս 10-ին Չարենցը նամակ է հասցեագրում Խանջյանին, պարզաբանումներ տալիս իր հետ կատարված անցանկալի իրավիճակների մասին: Ընդգրկում է հարցերի շրջանակ՝ իր ընդհանուր վիճակը, ԽՍՀՄ գրողների համագումարում իր ելույթը և անդրադարձները, «Գիրք ճանապարհի»-ի հրատարակության գործում Արիսյանի խանգարիչ դերը, իր և Խանջյանի հարաբերությունները: Խանջյանի հանդեպ Չարենցը թեև ունեցել է երբեմնակի ընդվզումներ, բայց գնահատությունն ընդհանուր առմամբ մնացել է բարձր: Առանձին պատառիկներ. «Աղասի! Հանուն ինչի՞ եք դուք ենթարկում նման հասարակական օստրակիզմի: Մի՞թե ես այնքան եմ մեղավոր խորհրդային սիստեմի առջև, որ իմ անունն անգամ հարկավոր է ջնջել խորհրդային գրականությունից... Մի՞թե ես արդեն դադարել եմ խորհրդային պոետ լինելուց, որ դուք հայ խորհրդային պոետիայի դեկլագացիա եք կազմում առանց ինձ, ջնջում եք իմ անունը...»¹⁸:

1935 թ. հունիսի 13-ին գրում է. «Լեցուն է սիրտս լացով, // Թակարդ է բախտը հինում, // Չգիտեմ՝ ո՞ր եմ գնում // Վարանքով, մթին կասկածով...// Ինձ խաբում, ինձ դավում են թերևս, // Ինձ տանում են գուցե դեպի մահ. // Ախ, դատարկ է շուրջըս, ամա,– // Եվ դահիճ են դարձել ընկերներս»¹⁹: Սա Homo Sapiens-ի ողբերգությունն է Homo Sovietikus-ի առջև: Բայց սա դեռ վերջը չէ:

Չարենցի վիճակը Ստալինի հարցումներից հետո

1935 թ. դեկտեմբերի 30-ին ՀԽՍՀ կազմավորման 15-ամյակի կապակցությամբ Մոսկվայում՝ Կրեմլում, ԽՍՀՄ կուսակցական և կառավարական ղեկավարությունն ընդունում է Հայաստանի աշխատավորության պատվիրակությանը՝ Խանջյանի գլխավորությամբ: Խորհրդակցությունը բացում է Մոլոտովը: Գրողներից ներկա էին Ս. Զորյանը, Ն. Զարյանը, Վ. Անանյանը, գրականագետ Սիմոն Հակոբյանը:

Ն. Զարյան. «Ընկերներ՛ր, ես պատվիրակության անդամ չեմ: Ես խնդրեցի, որ ինձ Կրեմլ բերեն. վաղուց էի երազում տեսնել ընկ. Ստալինին: Եվ ահա իմ կյանքի այդ երջանիկ, ամենաբերկրալից օրը հասավ»: Բուռն ծափահարությունների ներքո նա հայերեն կարդում է իր «Ստալին» ոտանավորը: Այնուհետև. «Իմ երջանիկ ժողովրդի մեծ սերն եմ մատուցում քեզ՝ ընկեր

¹⁷ Գրական թերթ, Երևան, 1935, թիվ 11, 20 մայիս:

¹⁸ Չարենց 1996, 274-279:

¹⁹ Չարենց 1996, 87:

Ստալին, երգելով քեզ՝ մեծ առաջնորդ: Այդ դու ես ժողովուրդների երջանկության ինժեներն ու դարբինը (ծափահարություններ)»²⁰:

Զորյանը խոսում է արվեստի և մշակույթի հարցերի մասին: Ստալինը հարցնում է.

– Քանի՞ թատրոն կա Հայաստանում:

– 20 թատրոն, – պատասխանում է *Զորյանը*, – որոնցից 5-ը՝ մայրաքաղաքում:

Այնուհետև Ստալինը հարցուփորձ է անում հայ գրողների աշխատանքի մասին: *Զորյանը* պատասխանում է, որ Հայաստանի գրողները լավ են զգում իրենց և զբաղված են ստեղծագործական բերկրալի աշխատանքով:

Ստալինը *Զորյանի* հետ վարում է այսպիսի զրույց.

«Ստալին – Ինչպե՞ս է ապրում գրող Չարենցը:

Զորյան – Ոչինչ:

Ստալին – Նրան կարծեմ նեղացնում են:

Զորյան – Նա այժմ իրեն հրաշալի է զգում:

Ստալին – Դուք օպերային թատրոն ունե՞ք:

Զորյան – Երրորդ տարին է, որ գոյություն ունի օպերան: Մենք ունենք հայերեն օրիգինալ օպերաներ»²¹:

Ինչպե՞ս Ստալինը հիշեց Չարենցին. հիշում էր «Գիրք ճանապարհի»-ի արգելման և «Աքիլլե՛ս, թե՛ Պյերո» ինտերմեդիայի հետ կապված միջադեպը, գուցե նաև Չարենցի հեռագիրը: Սա ինքնին յուրահատուկ փաստ է. իր փառքի գագաթնակետին հասած վիթխարի երկրի առաջնորդը հանդիսավոր արարողության ժամանակ հիշում է ծայրամասային մի հանրապետության թեկուզև հանճարեղ, բայցև հեռու մի բանաստեղծի:

Իհարկե, *Զորյանը* չէր ասում ճշմարտությունը, որովհետև հայ գրողները վատ էին ապրում, իսկ Չարենցի վիճակը ծանր էր: Ստալինի այս խոսքերից հետո Չարենցի հանդեպ պաշտոնական վերաբերմունքը մի կարճ շրջան ժամանակավորապես փոխվում է:

1936, մայիսի 21 – 1937, հուլիսի 8 ժամանակամիջոցում կազմվում է խմբային դատական գործ, որի մեջ Ներսիկ Ստեփանյանից անմիջապես հետո Ակսել Բակունցն է: Հաջորդում են Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, ևս 6 հոգի, ամբողջությամբ 9 ամբաստանյալ: Բակունցին ձերբակալում են օգոստոսի 9-ին: Նույն օրը՝ նաև Տեր-Սիմոնյանին, Ալազանին և ուրիշների, գիշերը՝ Մահարուն... Դատական մարմինները խմբի պարագլուխ են համարել Ստեփանյանին, իսկ առավել գործուն ղեկավարներ՝ Բակունցին ու Չարենցին:

Ապագայնացվող այս ժամանակներում Կոմիտասի վերադարձը դառնում է համաժողովրդական միավորման օր. 1936 թ. մայիսի 28-ին հայրենի հողին է հանձնվում Կոմիտասի (8/26.X.1869, Քյոթահիա – 22.X.1935, Փարիզ) աճյունը: Փարիզից սփյուռքահայ 1800 ներգաղթյալների հետ Կոմիտասի աճյունը հայրենիք են փոխադրում «Սինեյա» շոգենավով, խմբի մեջ էին Եր-

²⁰ Գրական թերթ, 1936, թիվ 1, 10 հունվար:

²¹ Գրական թերթ, 1936, թիվ 1, 10 հունվար:

վանդ Քոչարը, Լևոն Հարությունյանը և նշանավոր այլ դեմքեր: Հայաստանի ճանապարհը բռնած Կոմիտասի դագաղը «երկար ժամանակ անտիրական մնացել էր անջատված վագոնում՝ Նավթուղ կայարանում (Վրաստան): Ե՛վ դագաղը բերող ներգաղթող հայերը, և՛ ընդունելու պատրաստ Երևանը կրակի մեջ էին մնացել: Ո՛չ կարողանում էին այն համարձակորեն փոխադրել Երևան, ո՛չ էլ կարող էին թողնել Նավթուղ կայարանում»²²:

Կոմիտասի աճյունը Երևան է բերվում հուղարկավորության նախօրյակին՝ մայիսի 27-ին: Չարենցը Կոմիտասի հետ էր հոգով և ստեղծագործությամբ. Կոմիտասը հայոց պատմության ապրող էջն էր ու ծնունդ տվեց «Կոմիտաս», «Կոմիտասի հիշատակին» պոեմներին:

1936 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում Բերիան սպանում է 1930 թվականի մայիսից ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին: Դեպքը տեղի է ունեցել երեկոյան՝ ժամը 17-ից հետո, ժամը 20-ին արդեն «մի քանի ժամ» «քնած» էր: Թերթերը տպագրում են մահախոսականը. «ՀամԿ(Բ)Կ Անդերերկրյունը հայտնում է Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Խանջյանի մահը, որ տեղի ունեցավ 1936 թ. հուլիսի 9-ին ինքնասպանության ակտի հետևանքով: Ինքնասպանության ակտը դիտելով որպես փոքրագույն արտահայտություն՝ [հայտնվում է], որ ընկ. Խանջյանը վերջին ժամանակներս իր աշխատանքի մեջ մի շարք քաղաքական սխալներ էր թույլ տվել, որոնք արտահայտվել էին նացիոնալիստական ու հակահեղափոխական-տրոցկիստական տարրերի մերկացման գործում բավարար զգաստություն չցուցաբերելու մեջ»²³:

Խանջյանի ողբերգական մահը ցնցում է Հայաստանը: Սկզբից ևեթ ոչ ոք՝ առաջին հերթին Չարենցը, չէին հավատում ինքնասպանության վարկածին, այլ միայն սպանության, որը հետագայում ապացուցվեց:

Ըստ հուշագիր Ա. Աբրահամյանի՝ գույժը ծայնասփյուռով Չարենցը լսել է Ծաղկաձորի գրողների տանը գիշերվա ժամը 3.30-ին և հաղորդել ծանոթներից մեկին. «Դու պատկերացնո՞ւմ ես, չկա՛ Աղասին, չկա՛ Աղասի Խանջյանը: Թիֆլիսում սպանել են: Հենց նոր Ամերիկայից հաղորդեցին, թե իբր ինքնասպան է եղել: Սո՛ւտ է, չհավատա՛ս: Նա ինքնասպանություն չէր գործի, էն էլ օտար հողում: Նրան սպանել են»²⁴: Այս օրերին Չարենցն անում է այսպիսի գրառում. «Խանջյանը մեր վերջին հերոսն էր, որին սպանեց Բերիան»²⁵: Այս տեղեկությունը վստահելի չէ, որովհետև ժամը 23-ին հոսանքը Ծաղկաձորում անջատում էին:

Հոգեհանգստին Չարենցն անցնում է սգակիր ժողովրդի միջով, նրա հանդեպ կար «հիրավի համաժողովրդական պատկառանք»: Խանջյանի տունը, որ ժողովուրդը համարում էր «կլոր դաչա», Չարենցի սոնետներում վերածվել է «Նայիրյան Բելվեդերի»: Խանջյանի դագաղը առանձնատան

²² Հասրաթյան 1997, 108:

²³ Խորհրդային Հայաստան 1936, 11 հուլիսի:

²⁴ Գրական թերթ, Երևան, 1997, 1 ապրիլի:

²⁵ Չարենց 1983, 54:

երկրորդ հարկի ընդարձակ ճաշասենյակում էր՝ կարմիր կերպասով ծածկված սեղանի վրա: Սիմֆոնիկ նվագախումբը Սարաջևի գլխավորությամբ նվագել է Բեթհովենի ու Գրիգ:

Թոքաբույժ Գրիգոր Սաղյանին Չարենցն ասել է. «Աղասուն բուժում էին տուրերկույոզից, իսկ նրան սպանեց ատրճանակի գնդակը»: Բժիշկներ Սաղյանն ու Միրզա-Ավագյանը հրաժարվել են ստորագրել «ինքնասպանության» եզրակացությունը: «Խանջանի անձնական բժիշկ Սաղյանը և հայտնի վիրաբույժ Միրզա-Ավագյանը, տեսնելով Խանջանի զույգ քունքերի վերքերը, կասկածանքով ասել են, որ այդ վերքերը ինքնասպանի վերքեր չեն, այլ մեկն ու մեկի ձեռքով նա սպանված է: Այս կասկածի համար երկու բժիշկները բանտ նետվեցին: Սաղյանին գնդակահարեցին, իսկ Միրզա-Ավագյանը բանտում մահացավ»²⁶:

Կրակոցից հետո սպանությունն իր աչքով անմիջապես տեսել է Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների աշխատանքների վերահսկողության կոմիտեի հանձնաժողովի նախագահ Իվան Կորոտկովը, տարիներ շարունակ լուել և այդ մասին արտահայտվել է միայն քսան տարի անց²⁷: Փաստն արձանագրվել է ԽՍՀՄ XXII համագումարում (1961, հոկտեմբեր)²⁸: Նույն տեսակետին են նաև Անատոլի Ռիբակովն իր «Արբատի զավակները» վեպում (հայերեն թարգմանությունը՝ 1988) և Ռոյ Մեդվեդևը²⁹:

Խանջանի թաղումը տեղի է ունեցել հուլիսի 12-ին: Մուղղուսու խուզարկու հայացքի ներքո ոչ ոք չի հանդգնել պատվո պահակ կանգնել: Թաղման թափորը նկատի ունենալով՝ Ալազանը գրում է. «Սեղմված-խճողված շարքերում քայլում էի, հանկարծ կողքիս տեսա Ստեփան Ջորյանին: <...>: Մեզանից քիչ առաջ նկատեցի Եղիշե Չարենցին»³⁰:

Թաղումը՝ Կոնդի Կոզեռնի գերեզմանատանը, որ համարվում էր հեռավոր ու աննշան: Ժողովուրդն ալեկոծված էր, մինչդեռ Բերիայի դրածոները տարբեր տեղերում հավաքներ էին կազմակերպում և վանկարկում՝ «Կորչի իմպերիալիզմի լակեյ դավաճան Խանջանը», «Շնորհակալություն ընկեր Լավրենտի Բերիային»: Թաղման գիշերը նրանց, ովքեր պնդում էին, որ ոչ թե ինքնասպանություն է, այլ սպանություն, ձերբակալել են:

Խանջանի հանդեպ Չարենցի վերաբերմունքը ազատ էր, հարգալից, վստահող և գնահատող: Եղել է այնպես, որ կեսգիշերին այցելել է Խանջանին՝ Կենտկոմ, և նրան կարդացել նոր գրած գործը: Խանջանի սպանությունից հետո Չարենցն իրեն զգում է կատարելապես անպաշտպան: Ինքն իր առջև կանգնում է որպես հակառակորդների կողմից պաշտոնապես հռչակված հանցապարտ. «9.VII.1936» վերնագրված բանաստեղծության մեջ պարզ

²⁶ Ալազան 1990, 4:

²⁷ Антонов-Овсеенко 1999.

²⁸ St' u XXII съезд Коммунистической партии Советского союза 1962, 404:

²⁹ Медведев 1990.

³⁰ Ալազան 1990, 7-8:

ասում է. «...Կարծես թե միայն իննից հուլիսի, //<...> վերնագրերն այդ անբառ, անանուն // Դարձան մահվան պես ահեղ ու անհուն»³¹:

Գրողներն ընդդեմ գրողների

1936 թ. հուլիսի 14-ին տեղի է ունենում ՀԽՍՀ կուսկազմակերպության ժողովը. Խանջյանի սպանության մասին զեկուցում է Դաբադյանը: Ներկա էին՝ Դ. Տեր-Սիմոնյան, Ն. Զարյան, Վ. Ալազան, Գ. Հովնան, Վ. Նորենց, Հ. Քոչար, Գ. Ղազարյան, Ա. Սարգսյան: Ելույթ ունեցողները դաժան քննադատության են ենթարկում Խանջյանին, որի «դավաճանական ինքնասպանությունը [հարված էր] Անդրերկրկոմին և ընկեր Բերիային»: Քննադատվում են նրա հովանավորյալները, այդ թվում՝ ժողովին մասնակից Ալազանը, Նորենցը, Տեր-Սիմոնյանը, որոնք հանդես են գալիս «նացիոնալիստական բնույթի» մեղայական ելույթներով և ընդարձակում մահվան թակարդի մեջ ընկածների շրջանակը:

Ահա պատմաքաղաքական այս պայմաններում 1936 թ. հուլիսի 18-19-ին Չարենցն սկսում է հյուսել Աղասի Խանջյանի ողբերգական մահվանը նվիրված՝ «Դոֆինը Նայիրական» սոնետների փունջը, որը վերջնական տեսքի է բերել 29.VII-4.XII.1936-ին: Կազմել է նոր տետր, զետեղել 1-7 սոնետները: Ստեղծել է առանձին սոնետների մի քանի տարբերակներ: Սոնետները մաքրագրել է հուլիսի 29-30-ին Ծաղկաձորում:

Վկայություն Ծաղկաձորում հանգստացող Նորենցի. «Անվերջ մտորում էր Խանջյանի մասին, դատում, ենթադրություններ և եզրակացություններ անում: Նա իր այդ ապրումներն ու մտածումները զեղում էր նաև բանաստեղծությունների մեջ: Ինձ կարդաց այդ օրերին գրած սոնետների մի փունջ՝ «Նաիրյան դոֆին» ընդհանուր խորագրով»³²:

1937 թ. փետրվարի 8-ի մի գրության մեջ Չարենցը հուշում է. «Վերջնական տեքստը միայն սա է»: «Իմաստություն» սոնետի վրա ավելացրել է. «Тут кончается А. Х-ян и начинается իսկական ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀԱՅ ղեկավարություն... 1936.XI-11»³³:

Յուրաքանչյուր սոնետի մի քանի տարբերակը պայմանավորված է վերջնականի որոնումներով, որոնցում դառը արցունքներով ոգեկոչում է հանրապետության ղեկավարի, ընկերոջ թանկ հիշատակը: Ամբողջ շարքը քաղաքական ու ազգային այդ ծանր աղետի սուր և հուսահատ գիտակցումն է:

Գրել է հուլիսի 29-ի վաղ առավոտից մինչև հաջորդ օրվա ժ. 4-ը: Առաջին սոնետի Ա. տարբերակի թղթի դարձերեսին 1937-ի փետրվարի 8-ին հուշում է, թե որն է վերջնական տարբերակը և հայտնում շարքի հետ կապված կառուր մանրամասներ: Միջամտություններ է արել 1936-ի նոյեմբերի 19-ին:

³¹ Չարենց 1983, 131:

³² Նորենց 1961, 203:

³³ Չարենց 2017, 151-164:

1936-ի դեկտեմբերի 4-ին ավելացրել է ևս մեկ սոնետ՝ «Ճանապարհի խաչի (Իբրև տապանագիր)»³⁴:

Պատմությունը կրկնվում է («Հին պարտության լեզենդը»)։ հայրենանվեր Արա Գեղեցիկը դարձավ Շամիրամի զոհը, հայրենանվեր Խանջանը՝ Բերիայի:

Կատարված ողբերգության արձագանք են նաև այլ պատառիկներ՝ «Ձառանցանք» («Թվում է վայրկյանից այն սև»)՝³⁵, «Ջարմանք է հարուցում իմ մեջ»³⁶, որոնք մեկ ամբողջի մասեր են:

1936-ի հուլիսից Խանջանին հաջորդում է Ամատունին (Վարդապետյան, Համո Ամատունի, 1900-1938), որն ընդդեմ Խանջանի թեև վայելում էր Բերիայի հովանավորությունը, բայց 1937-ի սեպտեմբերին ինքն էլ դարձավ նրա զոհը:

1936 թ. սեպտեմբերի 24-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ վարչությունը Չարենցից ստորագրություն է վերցնում, ըստ որի՝ «ենթարկվելով հետաքննության, պարտավորվում է մինչև դատը չբացակայել Երևան քաղաքից» (ՆԷ, էջ 359): Մոտենում է փորձության ժամը. «Եվ ինչպես գուշակեր նա իրոք, - // Որ այսպես ծնծղաներով // Մեռնելու է մեր երգը վսեմ...»³⁷:

Ժամանակին ուղղված պատմական հայացքը 1936 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին քաղաքական աշնան մոտիվներ է ձևավորում՝ «Աշնան երգ» վերնագրված մի քանի բանաստեղծություններում: Աշնանային շարքը շարունակվում է հոկտեմբերի 1-ին գրած «Աշունը, ա՛խ, այնպես անցավ...» և նույն օրերին ստեղծված նույնաբնույթ այլ գործերում: Քաղաքական սառը աշնան հողմերն են՝ այսպիսի անդրադարձներով.

Աշունը, ա՛խ, այնպես անցավ՝
Ե՛վ ցնցող, և՛ ծանր, ինչպես՝
Հանճարեղ ոճիր կամ հանցանք:

Ցերեկները ծնծղաներ հնչեց,
Ցնծության շեփորներ հնչեղ, –
Գիշերները – դարձավ զառանցանք³⁸:

Շաչում է աշնան քամին, իբրև հին, դասական Ակվիլոն,
Աշուն է, և ծանր անձրևի արճիճե շեղջեր քշելով,
Եվ ավերք, և նեռ գուժելով՝ թռչում է հողմն Ակվիլոն³⁹:

Անդրադարձ կա նաև Իսպանիայում կատարվող քաղաքական դեպքերին. ԽՍՀՄ-ում, նաև Հայաստանում, ժողովներ են գումարվում, հողվածներ

³⁴ Չարենց 2017, 151-164, 367-383:

³⁵ Տե՛ս Չարենց 1983, 542:

³⁶ Տե՛ս Չարենց 2017, 164:

³⁷ Չարենց 1983, 190:

³⁸ Չարենց 1983, 159:

³⁹ Չարենց 1983, 62: Ակվիլոնը կամ Աքվիլոնը հյուսիսային քամին է:

են տպագրվում ի պաշտպանություն իսպանական ժողովրդի ու իսպանական գրականության: Զարենցն իր խոսքն ասում է բանաստեղծությունների իսպանական շարքով: ԽՍՀՄ-ում կատարվող ստալինյան բռնություններն ու Ֆրանկոյի, Մուսոլինիի, Հիտլերի ֆաշիզմը նույն չարիքն էին. գնդակահարվեցին, հալածվեցին գրողներ, հրդեհի ճարակ դարձան գրքեր:

Շարունակվող հալածանքներ

Նույն քաղաքական հալածանքների մեջ էր նաև Զարենցը. 1936 թ. նոյեմբերի 16-ին ՆԳԺԿ մարմինները որոշում են կայացնում Զարենցին, «ըստ ՀԽՍՀ ՔՕ 67, 68 հոդվածների, որպես մեղադրյալ, ենթարկել հետաքննության»: Այդ մասին նրան հայտնում են նույն օրը և ՀԽՍՀ ՆԳԺԿ վարչությունում ենթարկում հարցաքննության: Մեղադրվում է որպես գրողների հակահեղափոխական, ազգայնամուլական խմբի ղեկավարներից մեկը, ընթացքում ավելանում են տրոցկիստն ու ահաբեկիչը: Զարենցը կտրականապես ժխտում է մեղադրանքները, պաշտպանվում և տալիս բացատրություններ:

«*Հարց.* Դուք մեղադրվում եք նրանում, որ լինելով գրողների հակահեղափոխական նացիոնալիստական խմբի ղեկավարներից մեկը, տարիների ընթացքում ՀամԿ(Բ)Կ-ի և խորհրդային իշխանության դեմ տանում եք հակահեղափոխական աշխատանք: Դուք դա ընդունո՞ւմ եք:

Պատասխան. Ո՛չ: Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում: Ես եղել եմ գրողների «Նոյեմբեր» միության կազմակերպիչն ու ղեկավարը, որի մեջ ես ունեցել եմ իմ խումբը հետևյալ կազմով՝ ես ինքս, Ա. Բակունցը, Մ. Արմենը, Աճեմյանը (Մահարին): Վճռականապես պնդում եմ, որ խումբը ոչ մի հակահեղափոխական նացիոնալիստական աշխատանք չի տարել և այդպիսին չի համարվել»:

Զարենցին հակադարձում են արդեն իսկ բանտարկված գրողների ցուցմունքներով: Անվանապես ներկայացվում են Բակունցի, Վանանդեցու, Ալազանի, Մահարու ցուցմունքները:

«*Պատասխան.* Գրողների հակահեղափոխական խմբի ձերբակալված անդամների ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը: «Դա կեղծիք է», «Ես դա ժխտում եմ: Ցուցմունքները կեղծ են», «Ես դա չեմ ընդունում որպես ճշմարտություն, ես ժխտում եմ, <...> ցուցմունքները կեղծ են», «Մահարու ցուցմունքների այդ մասը ժխտում եմ»:

Քննիչը կտրում է. «Դուք շարունակում եք ստել»: «*Հարց.* Մի՞թե չեք զգում, որ Դուք մոլորվել եք սեփական պատասխանների մեջ և ջանում եք հետաքննությունից թաքցնել ճշմարտությունը: Դուք մտադի՞ր եք տալ ճիշտ ցուցմունք, որ Դուք գրողների հակահեղափոխական նացիոնալիստական խմբի ղեկավարներից մեկն եք և Ն. Ստեփանյանի ու Ա. Բակունցի հետ համատեղ ընդդեմ ՀամԿ(Բ)Կ-ի և խորհրդային իշխանության տարել եք ակտիվ պայքար...»: Հարցը դեռևս շարունակվում է, իսկ Զարենցը ժխտում է մեղադրանքը:

Անցնում են Սահակ Տեր-Գաբրիելյանին պաշտոնից ազատման հանգամանքներին: Զարենցը տեղին պատասխաններ է տալիս նաև այս հարցերին: Անցնում են ստեղծագործությանը, «Պատգամի» գաղտնագրին. «*Պատաս-*

խան. Բայց ես ամենևին դա չեմ համարում հակահեղափոխական դաշնակցական լոզունգ, որովհետև ես նկատի ունեմ ժողովուրդ հասկացությունը՝ սկզբունքորեն տարբեր ազգ տերմինից, որը կիրառում են դաշնակցականները: Այդ բանաստեղծությունը գրված է 1933 թվականին, երբ դրությունը Հայաստանի լեռնային շրջաններում, ինչպես հայտնի է, աղետալի էր, ինչն էլ իմ գրքի որոշ տեղերում, մասնավորապես այդ լոզունգում, օբյեկտիվ նախադրյալ է հանդիսացել իմ որոշ հոռետեսական տրամադրությունների համար:

Հարց. Ումի՞ց էիք Դուք պատրաստվում փրկել հայ ժողովրդին:

Պատասխան. Այն ղեկավարներից, որոնք Հայաստանի վերը նշված դրության մեղավորներն են:

Եվ հետաքննությունը եզրակացնում է. «Ձեր պատասխանը հետաքննությունը համարում է բացարձակապես կեղծ»⁴⁰:

Ինչպես Չարենցի, այնպես և մյուս գրողների հարցաքննությունները այն մտայնությունն են թելադրում, որ ՆԳԺԿ քննիչներն ունեցել են գրական աջակիցներ, որոնց օգնությամբ նախապես կազմել են հարցերը: Յուրաքանչյուր գրողի հարցում քննիչները այդքան դիպուկ չէին կարող լինել, մանավանդ որ կտրված էին հայոց լեզվից, հայ գրականությունից, հայ մշակույթից ընդհանրապես: Վստահորեն ներսից՝ գրողների տնից նրանց հետ համագործակցողներ են եղել, զորօրինակ՝ Արտաշես Ոսկերյանը, Հրաչյա Քոչարը, Սահակ Կիրակոսյանը, Գառնիկ Ղազարյանը, Գևորգ Աբովը և ուրիշներ:

Եզրակացություններ

Ամենայն հավանականությամբ, այս օրերին և այս կապակցությամբ է Չարենցն Ամատունուն հասցեագրել նամակ, որի անթվակիր պատառիկներից մեկում հաճախակի են հանդիպում «դատ», «դատավճիռ», «վճիռ հանել» արտահայտությունները:

Գրությունը պայմանավորված է դատից առաջ պարզաբանումներ տալու անհրաժեշտությամբ: Դատի ժամանակ նա պիտի հանդես գար ինքնապաշտպանական փաստարկներով. «Միայն այն անհողդողդ համոզմունքը, որ մարդիկ ինչի մեջ էլ ինձ մեղադրեն – գոնե մինչև օրս ոչ մի առիթ չեն ունեցել ինձ մեղադրելու գրական, կամ քաղաքական-հասարակական խարդախության ու երկերեսանիության մեջ, – կամ քծնանքի ու երկչոտության, – միայն այս անհողդողդ համոզմունքն է ահա, որ ինձ ուժ է տալիս դիմել ձեզ՝ *նաև* իբրև ինձ ճանաչող ընկերոջ, նախքան *անվերադարձ* կերպով *վճիռ* հանելը (որ հավասար է կյանքի ու մահվան – ինչ ձևով էլ լինի *մեղադրանքը*)»⁴¹:

1936 թ. նոյեմբերի 19-ին Չարենցը հանդես է գալիս «Ազդ!»-ով. «Եթե որևէ բերումով սույն գրություններն ընկնեն հա՛սկացող մեկի ձեռն՝ պահել խնամքով և միայն իմ *մահից հետո* հանձնել մեր թանգարանին: Ոչ մի դեպ-

⁴⁰ Ամբողջական հարցաքննությունը տե՛ս Չարենց 1983, 359-374:

⁴¹ Չարենց 2017, 242-243:

քում չոչնչացնել: Լավ է հանձնել ուր լինի՝ անգամ իմ կյանքի օրով, իմանալով, որ սրանք ինձ կկալանեն – քան ոչնչացնել»⁴²:

Հիշենք, որ սույն «Ազդ!»-ին նախորդել է նոյեմբերի 16-ի հարցաքննությունը: Կարելի է միայն ենթադրել, թե ինչ նկատի ունի «սույն գրություններ» ասելով:

Պատմական այս ժամանակաշրջանը համակողմանիորեն արտացոլվել է ոչ միայն Զարենցի գրառումների, այլև գեղարվեստական ժառանգության մեջ՝ մեկ տասնյակի հասնող պոեմներ և բազմաթիվ բանաստեղծություններ:

Առջևում բռնությունների, աքսորների ու գնդակահարությունների 1937 թվականն էր, Զարենցի հերոսացման վերջին տարին:

Գրականություն

Ալազան Վ. 1990, Տառապանքի ուղիներով, Երևան, «Խորհրդային գրող», 240 էջ:

Գրական թերթ 1935, Երևան, թիվ 11, 20 մայիսի:

Գրական թերթ 1936, Երևան, թիվ 1, 10 հունվարի:

Գրական թերթ 1997, Երևան, թիվ 12, 1 ապրիլի:

Գրականության և արվեստի թանգարան, Զարենցի ֆոնդ, 163:

Զարյան Ռ. 1975, Հուշապատում, Երևան, «Հայաստան», 546 էջ:

Խորհրդային Հայաստան 1936, 11 հուլիսի:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 10, թ. 92:

Հասրաթյան Մ. 1997, Եղիշե Զարենց, «Զարենցի հետ: Հուշեր», Երևան, «Նաիրի», 424 էջ:

Նորենց Վ. 1961, Հավերժ կենդանի դեմք, Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին, Երևան, «Հայաստան», 396 էջ:

Զարենց Ե. 1962, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 458 էջ:

Զարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 678 էջ:

Զարենց Ե. 1983, Անտիպ և չհավաքված երկեր (ԱԶԵ), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 528 էջ:

Զարենց Ե. 1996, Նորահայտ էջեր (ՆԷ), Երևան, ԵՊՀ հրատ., 636 էջ:

Զարենց Ե. 2017, Գիրք մնացորդաց, Երևան, «Տիգրան Մեծ», 486 էջ:

Антонов-Овсеенко А. 1999, Берия, Москва, «АСТ», 480 с.

Медведев Р. 1990, О Сталине и сталинизме, Москва, «Прогресс», 484 с.

XXII съезд Коммунистической партии Советского Союза 1962, Стенографический отчет, т. 2, Москва, 608 с.

ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1935-1936 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Դավիթ Գասպարյան

Ամփոփում

1935 թ. հունվար-մարտ ամիսներին պետական մեղադրանքով՝ որպես տեռորիստ, Զարենցը ենթարկվում է հարցաքննությունների: Մարտի 7-ին նրան ազատում են Հայաստանի պետական հրատարակչությունում զբաղեցրած պաշտոնից: Վիրա-

⁴² Զարենց 2017, 230:

վորված այս ամենից՝ հանդես է գալիս «Հայտարարությամբ», որ դուրս է գալիս Հայաստանի գրողների միությունից: Նրա դիմումին տալիս են քաղաքական բովանդակություն և իր ծննդյան օրը՝ մարտի 13-ին, հեռացնում Գրողների միության անդամությունից: Չարենցը չէր սպասում այսպիսի ծանր հարվածի, ինչն արտացոլվում է այս տարիների նրա բանաստեղծություններում և պոեմներում:

Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սպանությունից հետո (9 հուլիսի, 1936) նրա դեմ նորից սաստկանում են քաղաքական հալածանքները: 1936 թ. նոյեմբերի 16-ին բանաստեղծը ենթարկվում է ծանր հարցաքննության, իսկ 1937 թ. ամեն ինչ արվում է նրան ձերբակալելու և բանտարկելու համար: Բանտում էլ մահանում է:

Չարենցի կյանքի այս շրջանի վավերագրեր են ոչ միայն հարցաքննությունների արձանագրությունները, նրա գրություններն ու դիմումները, այլև բանաստեղծություններն ու պոեմները:

Բանալի բառեր՝ Հայաստանի գրողների միություն, քաղաքական հալածանքներ, Խանջյան, Ամատունի, Ստալին, հարցաքննություն, բանաստեղծություն:

ЕГИШЕ ЧАРЕНЦ В ГОДЫ ПОЛИТИЧЕСКИХ РЕПРЕССИЙ (1935-1936 ГОДЫ)

Давид Гаспарян

Резюме

С января по март 1935 г. Чаренц подвергался допросам по государственному обвинению в терроризме. 7 марта он был уволен из Государственного издательства Армении. В этой связи он написал заявление, в котором выразил желание покинуть ряды Союза писателей Армении. Его заявлению придали политическую окраску, и в день своего рождения, 13 марта, Чаренц был исключен из членов Союза писателей, что крайне тяжело отразилось на его психологическом состоянии.

После убийства первого секретаря ЦК КП Армении Агаси Ханджяна (9 июля 1936 г.) политические преследования против него вновь усилились. 16 ноября 1936 г. он был вызван на допрос, а в 1937 году арестован и заключен в тюрьму, где он и умер. Документами этого периода жизни Чаренца являются не только протоколы допросов, но и его заявления, стихи и поэмы.

Ключевые слова – Союз писателей Армении, политические преследования, Ханджян, Аматауни, Сталин, допрос, стихотворение.

EGISHE CHARENTS IN THE YEARS OF POLITICAL PERSECUTIONS (1935-1936)

David Gasparyan

Abstract

In January-March of 1935, Charents was interrogated on state charges as a terrorist. On March 7, he was released from his position at the State Publishing House of Armenia.

Injured by all this, he makes a "Declaration", in which, citing his difficult social situation, he announces that he is leaving the Writers' Union of Armenia. His application is given a political content and on his birthday, March 13, he is expelled from the membership of the Writers' Union. Charents did not expect such a heavy blow, which is reflected in his poems and poems during these years.

On December 30 of 1935 at the reception of the delegation of Armenian workers in the Kremlin on occasion of the 15th anniversary of Sovietization, Stalin became interested in the Charents conditions. Stalin knew Charents in connection with the book "The Book of the Road". After that, his condition improved for a short period, but after the assassination of the first secretary of the Central Committee, Agassi Khanjyan (July 9, 1936), political persecution against him intensified again. On November 16 of 1936, he was subjected to severe interrogation, and in 1937, everything was done to arrest and imprison him. He dies in prison.

Not only the transcripts of interrogations, his writings and applications, but also poems are documents of Charents' biography during those years.

Key words – Union of Writers of Armenia, political persecutions, Khanjian, Amatuni, Stalin, interrogation, poem.